

**Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2000 թվականի հունիսի 8-ի  
2000/31/ԵՀ հրահանգ**

**Ներքին շուկայում տեղեկատվական հասարակությանը բնորոշ  
ծառայությունների, մասնավորապես, էլեկտրոնային առևտրի որոշ  
իրավական հայեցակետերի մասին  
(Էլեկտրոնային առևտրի մասին հրահանգ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ,  
մասնավորապես, դրա 47(2), 55-րդ եւ 95-րդ հոդվածները,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը  
(2),

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին  
համապատասխան (3),

Քանի որ

1) Եվրոպական միությունը տնտեսական եւ սոցիալական առաջընթաց ապահովելու նպատակով ձգտում է Եվրոպայի պետությունների եւ ժողովուրդների միջեւ էլ ավելի սերտ կապեր հաստատել, Պայմանագրի 14(2) հոդվածին համապատասխան՝ ներքին շուկան իրենից ներկայացնում է առանց ներքին սահմանների տարածք, որտեղ երաշխավորված է ապրանքների, ծառայությունների ազատ տեղաշարժը եւ հիմնադրման ազատությունը, տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների զարգացումն առանց ներքին սահմանների տարածքում կարելու նշանակություն ունի Եվրոպայի ժողովրդների միջեւ բաժանարար գծերը վերացնելու համար,

2) Համայնքում, մասնավորապես փոքր եւ միջին ձեռնարկություններում տեղեկատվական հասարակության շրջանում էլեկտրոնային առևտրի զարգացումն ապահովում է մեծ թվով աշխատատեղեր: Այն կխթանի տնտեսական աճը եւ

Եվրոպական ընկերությունների կողմից նորարարությունների մեջ ներդրումների կատարումը, ինչը կարող է նաեւ մեծացնել եվրոպական արդյունաբերությունում մրցունակությունը, եթե ինտերնետը հասանելի լինի բոլորի համար,

3) Համայնքի իրավունքը եւ Համայնքի իրավակարգի առանձնահատկությունները հնարավորություն են տալիս Եվրոպայի քաղաքացիներին եւ օպերատորներին օգտվել էլեկտրոնային առևտրի ընձեռած հնարավորություններից՝ հաշվի չառնելով սահմանների գոյությունը, ուստի սույն Հրահանգի նպատակն է ապահովել Համայնքի իրավական ինտեգրման բարձր մակարդակ՝ ստեղծելու տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների համար առանց ներքին սահմանների իրական տարածք,

4) կարելի է էլեկտրոնային առևտրի համար ներքին շուկայում նպաստավոր պայմանների ամբողջությամբ ապահովումը եւ, ուստի, ինչպես «Հեռուստահեռարձակման իրականացման վերաբերյալ անդամ պետությունների իրավունքով, կանոնակարգով կամ վարչարարությամբ սահմանված որոշակի դրույթների համապատասխանեցման մասին» Խորհրդի 1989 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 89/552/ԵՏՀ հրահանգի դեպքում է (4), Համայնքում ինտեգրման բարձր մակարդակի ապահովումը,

5) Համայնքում տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների զարգացման համար արգելք են հանդիսանում ներքին շուկայի պատշաճ գործունեությունը խոչընդոտող մի շարք իրավական խոչընդոտներ, որոնք անհրապույր են դարձնում հիմնադրման ազատության իրավունքի եւ ծառայություններ մատուցելու ազատության իրականացումը, նշված խոչընդոտներն առաջանում են օրենսդրությունների միջեւ անհամապատասխանություններից եւ իրավական անորոշությունից, որի կապակցությամբ նման ծառայությունների նկատմամբ կիրառվում են ազգային կանոնները, համապատասխան ոլորտներում օրենսդրության համակարգման եւ փոփոխման բացակայության դեպքում խոչընդոտները պետք է վերացվեն Եվրոպական համայնքների Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքի համաձայն, առկա է իրավական անորոշություն անդամ պետությունների կողմից մեկ այլ անդամ պետության ծառայությունների վերահսկման առումով,

6) Համայնքի նպատակների, Պայմանագրի 43-րդ եւ 49-րդ հոդվածների եւ Համայնքի երկրորդային իրավունքի համաձայն, նշված խոչընդոտները պետք է վերացվեն՝

համաձայնեցնելով որոշ ազգային օրենքներ եւ պարզաբանելով Համայնքի մակարդակով որոշ իրավական հասկացություններ, այնքանով, որքանով անհրաժեշտ է ներքին շուկայի պատշաճ գործունեությունն ապահովելու համար, գործ ունենալով միայն ներքին շուկայում խնդիրներ առաջացնող որոշ հատուկ խնդիրների հետ՝ սույն Հրահանգն ամբողջությամբ համահունչ է Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքի հարգման անհրաժեշտության հետ,

7) իրավական որոշակիություն եւ սպառողների վստահությունն ապահովելու համար սույն Հրահանգը պետք է սահմանի ներքին շուկայում էլեկտրոնային առետրի որոշ իրավական հայեցակետեր կարգավորելու հստակ եւ ընդհանուր շրջանակ,

8) Սույն Հրահանգի նպատակն է ստեղծել իրավական համակարգ՝ ապահովելու անդամ պետությունների միջեւ տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների ազատ տեղաշարժը եւ չներդաշնակեցնել քրեական իրավունքի ոլորտը,

9) տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների ազատ տեղաշարժը կարող է շատ դեպքերում համարվել Համայնքի իրավունքում առավել ընդհանուր սկզբունք համարվող Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այն վավերացվել է բոլոր անդամ պետությունների կողմից) 10(1) հոդվածով ամրագրված՝ արտահայտման ազատության սկզբունքի յուրահատուկ դրսեւորում, այս պատճառով տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների մատուցումը կարգավորող հրահանգներով պետք է ապահովվի, որ նշված գործունեությունն ազատ կերպով իրականացվի նշված հոդվածի լույսի ներքո՝ միայն այդ հոդվածի 2-րդ պարբերությամբ եւ Պայմանագրի 46(1) հոդվածով սահմանված սահմանափակումների համաձայն, սույն Հրահանգով չեն կարգավորվում ազգային հիմնական կանոնները եւ արտահայտման ազատությանը վերաբերող սկզբունքները,

10) համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Հրահանգով նախատեսված միջոցները հասցվել են նվազագույնին, որոնք անհրաժեշտ են ներքին շուկայի պատշաճ գործունեությունն ապահովելու համար, եթե էլեկտրոնային առետրի համար առանց ներքին սահմանների տարածք երաշխավորելու համար անհրաժեշտ է Համայնքի մակարդակով ձեռնարկել միջոցներ, սույն Հրահանգով պետք է ապահովվի ընդհանուր հետաքրքրության նպատակների պաշտպանության,

մասնավորապես անչափահասների եւ մարդու արժանապատվության պաշտպանության բարձր մակարդակ, Պայմանագրի 152-րդ հոդվածին համապատասխան՝ հանրային առողջապահությունը Համայնքի այլ քաղաքականությունների էական բաղադրատարրն է,

11) սույն Հրահանգը չի հակասում Համայնքի ակտերով սահմանված՝ հատկապես հանրային առողջապահությանը եւ սպառողների շահերի պաշտպանությանը, ի թիվս այլ հրահանգների, հետեւյալ հրահանգները՝ Խորհրդի 1993 թվականի ապրիլի 5-ի թիվ 93/13/ԵՏՀ հրահանգը «Սպառողական պայմանագրերի անարդար պայմանների մասին» (5), Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1997 թվականի մայիսի 20-ի թիվ 97/7/ԵՀ հրահանգը «Հեռահար պայմանագրերի առումով սպառողների պաշտպանության մասին» (6) հանդիսանում են կարելու տարր պայմանագրային խնդիրներում սպառողներին պաշտպանելու համար, նշված Հրահանգները եւս ամբողջությամբ կիրառվում են տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների նկատմամբ, այդ նույն Համայնքի օրենսդրությունը, որն ամբողջությամբ կիրառվում է տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների նկատմամբ, ներառում է մասնավորապես նաեւ Խորհրդի 1984 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 84/450/ԵՏՀ հրահանգը «Շփոթեցնող եւ համեմատական գովազդի մասին» (7), Խորհրդի 1986 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 87/102/ԵՏՀ հրահանգը «Սպառողական վարկի մասին անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի եւ վարչական ակտերի համապատասխանեցման մասին» (8), Խորհրդի 1993 թվականի մայիսի 10-ի թիվ 93/22/ԵՏՀ հրահանգը «Արժեթղթերի ոլորտում մատուցվող ներդրումային ծառայությունների մասին» (9), Խորհրդի 1990 թվականի հունիսի 13-ի թիվ 90/314/ԵՏՀ հրահանգը «Ճամփորդությունների (ուղեորության, հյուրանոցի, սննդի, զվարճությունների եւ այլ ծախսեր ներառող) փաթեթի մասին» (10), Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի փետրվարի 16-ի թիվ 98/6/ԵՀ հրահանգ «Սպառողներին առաջարկված ապրանքների գների նշմամբ սպառողների պաշտպանության մասին» (11), Խորհրդի 1992 թվականի հունիսի 29-ի թիվ 92/59/ԵՏՀ հրահանգ «Արտադրանքի ընդհանուր անվտանգության մասին» (12), Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1994 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 94/47/ԵՀ հրահանգը «Անշարժ գույքի տարածամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի (timeshare) ձեռքբերման պայմանագրերի որոշակի ասպեկտների հետ կապված գնորդների պաշտպանության

մասին» (13), Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի մայիսի 19-ի 98/27/ԵՀ հրահանգը «Սպառողական շահերի պաշտպանության համար իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները (անգործությունը) կանխելու մասին» (14), Խորհրդի 1985 թվականի հուլիսի 25-ի թիվ 85/374/ԵՏՀ հրահանգը «Խոտանված արտադրանքի համար պատասխանատվության վերաբերյալ անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի եւ վարչարարական ակտերի համապատասխանեցման մասին» (15), Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1999 թվականի մայիսի 25-ի թիվ 1999/44/ԵՀ հրահանգը «Սպառողական ապրանքների վաճառքի որոշ ասպեկտների եւ դրանց համար տրված երաշխիքների մասին» (16), Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի հետագա հրահանգը «Սպառողական ֆինանսական ծառայությունների հեռակա շուկայահանման մասին» եւ Խորհրդի 1992 թվականի մարտի 31-ի թիվ 92/28/ԵՏՀ հրահանգը «Դեղորայքային արտադրանքի գովազդի մասին» (17), սույն Հրահանգը չպետք է հակասի ներքին շուկայի շրջանակներում ընդունված՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի հուլիսի 6-ի թիվ 98/43/ԵՀ հրահանգին «Ծխախոտային արտադրանքի գովազդի եւ հովանավորության հետ կապված անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի եւ վարչական ակտերի համապատասխանեցման մասին» (18) կամ «Հանրային առողջապահության մասին» հրահանգներին, սույն Հրահանգը լրացնում է նշված Հրահանգներով եւ, մասնավորապես թիվ 97/7/ԵՀ հրահանգով սահմանված տեղեկատվությանը ներկայացվող պահանջները,

12) անհրաժեշտ է սույն Հրահանգի գործողության ոլորտից բացառել որոշ գործողությունների իրականացումն այն հիմքով, որ այս ոլորտներում Պայմանագրի կամ գործող երկրորդային օրենսդրության համաձայն ծառայություններ մատուցելու ազատությունը, այս փուլում, չի կարող երաշխավորվել, նշված գործողությունների բացառումը չի խոչընդոտում որեւէ գործիքի կիրառմանը, որը կարող է անհրաժեշտ լինել ներքին շուկայի պատշաճ գործունեության ապահովման համար, սույն Հրահանգով կարգավորվող մի շարք ծառայությունների նկատմամբ կիրառվող հարկման, մասնավորապես ավելացված արժեքի հարկը պետք է բացառվի սույն Հրահանգի գործողության ոլորտից,

13) սույն Հրահանգի նպատակը չէ սահմանել հարկաբյուջետային պարտավորությունների վերաբերյալ կանոններ: Այն նաեւ չի խոչընդոտում

էլեկտրոնային առետրի ֆիսկալ ասպեկտների վերաբերյալ Համայնքի գործիքների մշակմանը,

14) Անձնական տվյալների մշակման մասով անհատների պաշտպանությունը կարգավորվում է միայն Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 95/46/ԵՀ հրահանգով «Անձնական տվյալների մշակման մասով անհատների պաշտպանության եւ նշված տվյալների ազատ տեղաշարժի մասին» (19) եւ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1997 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 97/66/ԵՀ հրահանգով «Անձնական տվյալների մշակման եւ հեռահաղորդակցության ոլորտում անձեռնմխելիության մասին» (20), որոնք ամբողջությամբ կիրառվելի են տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների նկատմամբ, անձնական տվյալների ոլորտում նշված հրահանգներն արդեն սահմանում են Համայնքի իրավական համակարգ եւ, ուստի, անհրաժեշտ չէ կարգավորել սույն խնդիրը սույն Հրահանգով՝ ապահովելու ներքին շուկայի բնականոն գործունեությունը, մասնավորապես, անդամ պետությունների միջեւ անձնական տվյալների ազատ տեղաշարժը, սույն Հրահանգը պետք է իրականացվի եւ կիրարկվի ամբողջությամբ անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող սկզբունքներին համապատասխան, մասնավորապես կապված անցանկալի առետրային հաղորդակցության եւ միջնորդների պարտավորության հետ, սույն Հրահանգի շրջանակներում չի կարող կարգավորվել բաց ցանցերի, ինչպես օրինակ՝ ինտերնետի անանուն օգտագործումը,

15) հաղորդագրությունների գաղտնիությունը երաշխավորվում է թիվ 97/66/ԵՀ հրահանգի 5-րդ հոդվածով, նշված հրահանգին համապատասխան՝ անդամ պետությունները պետք է արգելեն հաղորդակցություն ուղարկողներից եւ ստացողներից բացի այլ անձանց, բացառությամբ օրենքով լիազորված անձանց կողմից նման հաղորդակցությունների ցանկացած տեսակի վերահսկման եւ ստուգման դեպքերը,

16) սույն Հրահանգի կիրառման ոլորտից բացառվում են միայն շահումով խաղերը, վիճակախաղերը եւ տոտալիզատորները, որոնք ներառում են դրամական խաղադրույքների կատարում, սույն Հրահանգը չի ընդգրկում գովազդելու նպատակով կազմակերպված մրցույթները կամ խաղերը, որոնց նպատակն է ապրանքների կամ ծառայությունների վաճառքը, եւ որոնց համար կատարված վճարները, վճարների կատարման դեպքում, ուղղվում են միայն գովազդված ապրանքների կամ ծառայությունների ձեռքբերմանը,

17) տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների սահմանումն արդեն տրված է Համայնքի իրավունքով, Տեխնիկական չափանիշների եւ կանոնակարգերի ու տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություններին վերաբերող կանոնների ոլորտում տեղեկատվության տրամադրման ընթացակարգը սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի հունիսի 22-ի թիվ 98/34/ԵՀ հրահանգում (21) եւ «Պայմանական մատչելիության վրա հիմնված կամ պայմանականորեն մատչելի ծառայությունների իրավական պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի նոյեմբերի 20-ի հրահանգում (22), սույն սահմանումը տարածվում է տվյալների մշակման (ներառյալ՝ թվային սեղմումը) եւ պահպանման համար նախատեսված էլեկտրոնային սարքավորումների միջոցով տարածության վրա եւ ծառայություն ստացողի անհատական խնդրանքով որպես վարձատրություն տրամադրված որեւէ ծառայության վրա,

18) տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունները ներառում են առցանց կատարվող մի շարք տնտեսական գործունեություններ, նշված գործունեությունների մեջ մտնում են, մասնավորապես, ապրանքների առցանց վաճառքը, այնպիսի գործունեությունները, ինչպես օրինակ՝ ապրանքների մատակարարումը որպես այդպիսին կամ ծառայությունների՝ ոչ առցանց մատուցումն ընդգրկված չեն, տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների մեջ չեն մտնում միայն առցանց մատուցվող ծառայությունները, այլ նաեւ, լինելով տնտեսական գործունեություն, այն ներառում է նաեւ այնպիսի ծառայություններ, որոնց համար չեն վճարում ծառայություններն ստացողների, ինչպես օրինակ՝ առցանց տեղեկատվություն կամ առետրային հաղորդագրություններ առաջարկողների կամ տվյալների որոնման, մատչելիության եւ գտնելու հնարավորություն ընձեռող գործիքներ տրամադրողների կողմից, տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունները ներառում են նաեւ հաղորդակցության ցանցի միջոցով տեղեկատվության փոխանցման ծառայություններ, ինչպես նաեւ հաղորդակցության ցանցի մատչելիությունն ապահովող կամ ծառայություն ստացողի կողմից տրամադրված տեղեկատվության տեղաբաշխման ծառայություններ, թիվ ԵՏՀ/89/552 հրահանգի իմաստով հեռուստահեռարձակումը, ինչպես նաեւ ռադիոհեռարձակումը տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություններ չեն, քանի որ դրանք չեն մատուցվում անհատի խնդրանքով, ի տարբերություն, ծառայությունները, որոնք փոխանցվում են մի կետից մյուս կետը, ինչպես օրինակ՝ ցպահանջ վիդեո հեռարձակումը կամ էլեկտրոնային փոստով

առեւտրային հաղորդակցությունների տրամադրումը տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություններ են, առեւտրային, ձեռնարկատիրական կամ մասնագիտական գործունեության շրջանակներից դուրս գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց կողմից էլեկտրոնային փոստի կամ համանման անհատական կապի միջոցների օգտագործումը, ինչպես նաեւ նման անձանց կողմից պայմանագրերի կնքման համար դրանց օգտագործումը տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություններ չեն, գործատուի եւ աշխատողի միջեւ պայմանագրային հարաբերությունները տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություններ չեն, տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություններ չեն համարվում այն գործողությունները, որոնք իրենց բնույթով չեն կարող իրականացվել տարածության վրա եւ էլեկտրոնային եղանակով, ինչպես օրինակ՝ ընկերության ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտը կամ հիվանդի վիճակի զննման ժամանակ բժշկի կողմից տրամադրվող խորհրդատվությունը,

19) այն վայրը, որտեղ ծառայություն մատուցողն իրականացնում է տնտեսական գործունեություն, պետք է որոշվի Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքով, համաձայն որի՝ «տնտեսական գործունեության իրականացում» հասկացությունը ներառում է տնտեսական գործունեության իրականացման մշտական վայրում տնտեսական գործունեության փաստացի իրականացումն անորոշ ժամկետով, սույն պահանջը եւս իրականացվում է, եթե ընկերությունը հիմնադրվել է տվյալ ժամանակահատվածի համար, ինտերնետ ցանցի միջոցով ծառայություններ մատուցող ընկերության տնտեսական գործունեության իրականացման վայրն այն վայրը չէ, որտեղ տեղակայված են ցանցի աշխատանքն ապահովող տեխնոլոգիաները կամ այն վայրը, որտեղ մատչելի է դրա ցանցը, սակայն այն վայրն է, որտեղ այն իրականացնում է իր տնտեսական գործունեությունը, եթե ծառայություն մատուցողն ունի մի քանի տնտեսական գործունեության իրականացման վայր, կարելի է որոշել, թե տնտեսական գործունեության իրականացման որ վայրից է մատուցվում համապատասխան ծառայությունը, եթե դժվար է որոշել, թե տնտեսական գործունեության իրականացման մի քանի վայրերից որ վայրում է տվյալ ծառայությունը մատուցվում, ապա սա այն վայրն է, որտեղ կենտրոնացված կերպով ծառայություն մատուցողն իրականացնում է իր կոնկրետ ծառայությանը վերաբերող գործողություններ,



20) «Ծառայություն ստացող» հասկացությունն ընդգրկում է թե՛ բաց ցանցերի, ինչպես օրինակ՝ ինտերնետի միջոցով տեղեկատվություն տրամադրող անձանց եւ թե՛ անձնական կամ մասնագիտական նպատակներով տեղեկատվություն որոնող անձանց կողմից տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների օգտագործման բոլոր տեսակները,

21) համաձայնեցված ոլորտի շրջանակը չի հակասում տեղեկատվական հասարակության ծառայություններին վերաբերող Համայնքի հետագա ներդաշնակեցմանը եւ Համայնքի իրավունքին համապատասխան ազգային մակարդակով ընդունված հետագա օրենսդրությանը, համաձայնեցված ոլորտն ընդգրկում է միայն առցանց գործողություններին վերաբերող պահանջները, ինչպես օրինակ՝ առցանց տեղեկատվությունը, առցանց գովազդը, առցանց առաջարկը, առցանց պայմանագրերի կնքումը եւ չի վերաբերում անդամ պետությունների՝ ապրանքներին վերաբերող իրավական պահանջներին, ինչպես օրինակ՝ անվտանգության չափանիշներին, պիտակավորման պարտականություններին կամ ապրանքների նկատմամբ պատասխանատվությանը կամ ապրանքների առաքմանը կամ փոխադրմանը, այդ թվում՝ դեղագործական արտադրանքի բաշխմանը վերաբերող անդամ պետությունների պահանջներին, համաձայնեցված ոլորտը չի ընդգրկում որոշ ապրանքներին, այդ թվում՝ արվեստի գործերին վերաբերող պետական իշխանության նախապատվության իրավունքների իրականացումը,

22) տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունները պետք է վերահսկվեն գործունեության իրականացման վայրում՝ արդյունավետ կերպով ապահովելու հանրային շահի պաշտպանությունը, այս նպատակով անհրաժեշտ է ապահովել, որ իրավասու մարմինը պաշտպանի ոչ միայն իր երկրի քաղաքացիներին, այլ Համայնքի բոլոր քաղաքացիներին, անդամ պետությունների միջեւ փոխադարձ վստահության մակարդակը բարձրացնելու նպատակով կարելի է հստակ կերպով նշել նշված պատասխանատվությունը ծառայության ծագման վայրի անդամ պետության մասով, ավելին, ծառայություններ մատուցելու ազատությունը եւ ծառայություններ մատուցողների եւ ստացողների համար իրավական որոշակիությունն արդյունավետորեն երաշխավորելու նպատակով տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունները պետք է սկզբունքորեն կարգավորվեն անդամ պետության իրավունքով, որտեղ տնտեսական գործունեություն է իրականացնում ծառայություն մատուցողը,

23) սույն Հրահանգը նպատակ չունի ոչ միայն սահմանել միջազգային մասնավոր իրավունքի կոլիզիոն նորմեր, այլ նաեւ չի կարգավորում դատարանների իրավասությունը, միջազգային մասնավոր իրավունքի նորմերով սահմանված՝ կիրառելի իրավունքի դրույթներով չպետք է սահմանափակվի սույն Հրահանգով սահմանված տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություններ մատուցելու ազատությունը,

24) սույն Հրահանգի համատեքստում, չնայած տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների՝ աղբյուրի մոտ վերահսկմանն առնչվող կանոնին, անդամ պետությունները սույն Հրահանգով սահմանված պայմանների համաձայն, իրավունք ունեն ձեռնարկել միջոցներ՝ սահմանափակելու տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների ազատ տեղաշարժը,

25) մասնավոր իրավունքի վեճերի լուծմամբ զբաղվող ազգային դատարանները, այդ թվում՝ քաղաքացիական դատարանները կարող են ձեռնարկել միջոցներ՝ շեղում կատարելու տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություններ մատուցելու ազատությունից՝ սույն Հրահանգով սահմանված պայմաններին համապատասխան,

26) անդամ պետությունները, սույն Հրահանգով սահմանված պայմաններին համապատասխան, կարող են կիրառել քրեական իրավունքին եւ քրեական վարույթին առնչվող իրենց ազգային կանոնները՝ նպատակ հետապնդելով ձեռնարկել հանցագործությունների բացահայտման եւ քրեական հետապնդման համար անհրաժեշտ բոլոր քննչական եւ այլ միջոցները՝ նշված միջոցների մասին Հանձնաժողովին չծանուցելով,

27) սույն Հրահանգը «Սպառողական ֆինանսական ծառայությունների հեռակա շուկայահանման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի հետագա հրահանգի հետ միասին, նպաստում է ֆինանսական ծառայությունների առցանց տրամադրման ընդհանուր շրջանակի ստեղծմանը, սույն Հրահանգը չի խոչընդոտում ֆինանսական ծառայությունների ոլորտում, մասնավորապես, այս ոլորտում վարքագծի կանոնների ներդաշնակեցման ուղղությամբ առաջ քաշվող հետագա նախաձեռնությունները, սպառողներին պաշտպանելու նպատակով տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություններ մատուցելու ազատությունը սահմանափակող որոշ հանգամանքների համաձայն՝ սույն Հրահանգով անդամ պետությունները կարող են նաեւ միջոցներ

ձեռնարկել ֆինանսական ծառայությունների ոլորտում, մասնավորապես, միջոցներ՝ ուղղված ներդրողների պաշտպանությանը,

28) անդամ պետությունների կողմից ստանձնած՝ տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություն մատուցողից գործունեության իրականացման համար նախնական թույլտվություն չպահանջելու պարտավորությունը չի վերաբերում «Համայնքի փոստային ծառայությունների ներքին շուկայի զարգացման եւ ծառայության որակի բարելավման ընդհանուր կանոնների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1997 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 97/67/ԵՀ հրահանգով (23) կարգավորվող փոստային ծառայություններին, որը ներառում է էլեկտրոնային փոստով ուղարկվող տպագրված հաղորդագրության առձեռն առաքում եւ չի ներազդում, մասնավորապես, էլեկտրոնային ստորագրության հավաստագրման ծառայություններ մատուցողների կամավոր հավատարմագրման համակարգերի վրա,

29) տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների ֆինանսավորման եւ մի շարք նոր, անվճար ծառայությունների զարգացման համար կարելու նշանակություն ունեն առետրային հաղորդագրությունները, սպառողների պաշտպանություն եւ արդար առետուր ապահովելու նկատառումներից ելնելով՝ առետրային հաղորդագրությունները, այդ թվում՝ զեղչերը, գովազդային առաջարկները եւ գովազդելու նպատակով կազմակերպված մրցույթները կամ խաղերը պետք է բավարարեն թափանցիկության մի շարք պահանջներ, նշված պահանջները չեն հակասում թիվ 97/7/ԵՀ հրահանգին, սույն Հրահանգը չպետք է ներազդի Առետրային հաղորդակցությունների մասին գործող հրահանգներին, մասնավորապես թիվ 98/43/ԵՀ հրահանգին,

30) էլեկտրոնային փոստով անցանկալի առետրային հաղորդագրությունների ուղարկումը կարող է անընդունելի լինի սպառողների եւ տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություններ մատուցողների համար, ինչպես նաեւ կարող է խաթարել ինտերակտիվ ցանցերի բնականոն գործունեությունը, սույն Հրահանգի շրջանակներում չի կարգավորվում անցանկալի առետրային հաղորդագրությունների որոշ տեսակներ ստանալու վերաբերյալ ստացողի համաձայնության հարցը, ինչն արդեն իր կարգավորումն է ստացել, մասնավորապես, թիվ 97/7/ԵՀ եւ թիվ 97/66/ԵՀ հրահանգներով, էլեկտրոնային փոստով անցանկալի առետրային հաղորդագրությունների ուղարկումը թույլատրող անդամ պետություններում պետք է խթանվի եւ դյուրինացվի արդյունաբերությունը զտող նախաձեռնությունների

մշակումը, ավելին, անհրաժեշտ է, որ ցանկացած դեպքում անցանկալի առետրային համայնքները հստակորեն առանձնացվեն որպես այդպիսին՝ բարելավելու թափանցիկության գործընթացը եւ դյուրինացնելու նշված արդյունաբերության ոլորտում իրականացվող նախաձեռնությունների ընթացքը, էլեկտրոնային փոստով անցանկալի առետրային հաղորդագրություններ ստանալու դեպքում ստացողը չպետք է կատարի հաղորդակցության լրացուցիչ ծախսեր,

31) անդամ պետությունները, որոնք թույլատրում են իրենց տարածքում տնտեսական գործունեություն իրականացնող ծառայություն մատուցողների կողմից էլեկտրոնային փոստով առանց հաղորդագրություն ստացողի նախնական համաձայնության ուղարկել անցանկալի առետրային հաղորդագրություններ, պետք է ապահովեն, որ ծառայություն մատուցողները պարբերաբար հաշվի առնեն եւ հարգեն հաղորդագրություններ ստանալ չցանկացողների գրանցամատյանները, որտեղ կարող են գրանցվել նմանատիպ առետրային հաղորդագրություններ ստանալ չցանկացող ֆիզիկական անձինք,

32) Համայնքում՝ կարգավորվող մասնագիտությունների անդամների կողմից ինտերնետով առաջարկվող միջսահմանային ծառայությունների զարգացման խոչընդոտները վերացնելու նպատակով անհրաժեշտ է Համայնքի մակարդակով համապատասխանության ապահովումը՝ սպառողների պաշտպանությանը կամ հանրային առողջապահությանն ուղղված մասնագիտական կանոնների համաձայն, Համայնքի մակարդակով կիրառվող վարքագծի կանոնները լավագույն միջոցն են առետրային հաղորդագրության նկատմամբ կիրառվող մասնագիտական էթիկայի կանոնները սահմանելու համար, անհրաժեշտ է խրախուսել կանոնների մշակումը կամ, հարկ եղած դեպքում, դրանց հարմարեցումը՝ չհակասելով մասնագիտական մարմինների եւ ասոցիացիաների անկախությունը,

33) սույն Հրահանգը լրացնում է կարգավորվող մասնագիտություններին վերաբերող Համայնքի իրավունքին եւ ազգային իրավունքին՝ պահպանելով այս ոլորտում կիրառվող մի շարք հետետողական կանոններ,

34) յուրաքանչյուր անդամ պետություն պետք է փոփոխի իր օրենսդրությունը, որով սահմանվում են պահանջներ եւ, մասնավորապես այնպիսի պահանջներ, որոնք կարող են խոչընդոտել էլեկտրոնային եղանակով պայմանագրերի կիրառմանը, նման փոփոխություն պահանջող օրենսդրության ուսումնասիրությունը պետք է լինի

համակարգված եւ պետք է ընդգրկի պայմանագրային գործընթացի բոլոր անհրաժեշտ փուլերը եւ գործողությունները, այդ թվում՝ պայմանագրերի ներկայացումը, սույն փոփոխության նպատակն է կնքված պայմանագրերի՝ էլեկտրոնային եղանակով կիրառման ապահովումը, էլեկտրոնային ստորագրությունների իրավաբանական ուժը կարգավորվում է «էլեկտրոնային ստորագրությունները կարգավորող Համայնքի համակարգի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1999 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 1999/93/ԵՀ հրահանգով (24), վճարված ծառայության առցանց մատուցումը վկայում է ծառայություն մատուցողի կողմից հաղորդագրության ստացման մասին,

35) սույն Հրահանգը չի սահմանափակում անդամ պետությունների հնարավորությունը՝ պահպանելու կամ սահմանելու էլեկտրոնային եղանակով կնքվող պայմանագրերին ներկայացվող գործող ընդհանուր կամ հատուկ իրավական պահանջները, մասնավորապես, պաշտպանված էլեկտրոնային ստորագրություններին վերաբերող պահանջները,

36) անդամ պետությունները կարող են պահպանել օրենքով դատարանների, պետական մարմինների մասնակցությունը կամ պետական կառավարման ոլորտի մասնագիտությունները պահանջող պայմանագրերի մասով էլեկտրոնային պայմանագրերի կիրառման սահմանափակումները, այս հնարավորությունը նաեւ ընդգրկում է ինչպես պայմանագրեր, որոնք պահանջում են դատարանների, պետական մարմինների մասնակցությունը կամ պետական կառավարման ոլորտի մասնագիտությունները՝ երրորդ անձանց նկատմամբ ուժ ունենալու համար, այնպես էլ այն պայմանագրերը, որոնք օրենքով պահանջում են նոտարի վավերացում կամ հաստատում,

37) անդամ պետությունները պարտավորվում են վերացնել էլեկտրոնային պայմանագրերի կիրառման այն խոչընդոտները, որոնք բխում են իրավական պահանջներից, այլ ոչ թե, որոշ դեպքերում, պայմանագրերն էլեկտրոնային եղանակով կիրառելու անհնարինությունից բխող գործնական խոչընդոտներից,

38) անդամ պետությունները պետք է վերացնեն էլեկտրոնային պայմանագրերի կիրառման խոչընդոտները Համայնքի իրավունքով ամրագրված՝ պայմանագրերի կիրառման համար սահմանված իրավական պահանջներին համահունչ,

39) տրամադրվելիք տեղեկատվության եւ պատվերների տրման համար բացառապես էլեկտրոնային փոստով կամ սույն Հրահանգով նախատեսված՝ համանման անհատական հաղորդակցության միջոցներով կնքվող պայմանագրերի դրույթներից կատարված բացառությունները չպետք է հնարավորություն տան տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություններ մատուցողներին շրջանցել ամրագրված դրույթները,

40) անդամ պետությունների օրենսդրությունների եւ որպես միջնորդներ հանդես եկող ծառայություն մատուցողների պատասխանատվությունը կարգավորող նախադեպային իրավունքի միջեւ առկա եւ ծագող անհամապատասխանությունները խոչընդոտում են ներքին շուկայի բնականոն գործունեությանը՝ մասնավորապես բացասաբար անդրադառնալով միջսահմանային ծառայությունների զարգացմանը եւ խաթարելով մրցակցությունը, կոնկրետ դեպքերում ծառայություն մատուցողները պետք է գործեն՝ նպատակ ունենալով կանխարգելել կամ կասեցնել անօրինական գործողությունները, սույն Հրահանգը պետք է համապատասխան հիմք հանդիսանա անօրինական ճանապարհով ձեռքբերված տեղեկատվության մատչելիությունն արգելափակելու արագ եւ հուսալի ընթացակարգերի մշակման համար, նշված մեխանիզմները կարող են մշակվել բոլոր համապատասխան կողմերի միջեւ կնքված կամավոր պայմանագրերի հիման վրա եւ պետք է խրախուսվեն անդամ պետությունների կողմից, նման ընթացակարգերի ընդունումը եւ իրականացումը բխում է տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների մատուցման գործում ներգրավված բոլոր կողմերի շահերից, տարբեր շահագրգիռ անձանց պատասխանատվությունը կարգավորող սույն Հրահանգի դրույթները չպետք է խոչընդոտեն թիվ 95/46/ԵՀ եւ 97/66/ԵՀ հրահանգների շրջանակներում պաշտպանության եւ նույնականացման տեխնիկական համակարգերի եւ թվային տեխնոլոգիայով գործող վերահսկման տեխնիկական գործիքների զարգացմանը եւ արդյունավետ շահագործմանը,

41) սույն Հրահանգը կարգավորում է տարբեր վտանգված շահեր եւ սահմանում է սկզբունքներ, որոնք հիմք են ծառայում արդյունաբերության ոլորտին վերաբերող համաձայնագրերի կնքման եւ ստանդարտների մշակման համար,

42) տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություն մատուցողն ազատվում է սույն Հրահանգով սահմանված պատասխանատվությունից միայն այն դեպքում, երբ վերջինս սահմանափակվում է հաղորդակցության ցանցի շահագործմամբ եւ մատչելիության ապահովմամբ, որի միջոցով երրորդ անձանց կողմից տրամադրված

տեղեկատվությունը փոխանցվում կամ ժամանակավորապես պահվում է՝ միայն նպատակ ունենալով տեղեկատվության փոխանցումը դարձնել առավել արդյունավետ, տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություն մատուցողի նշված գործողությունը կրում է բացառապես տեխնիկական, ավտոմատ եւ պասիվ բնույթ, ինչը ենթադրում է, որ նա ոչ միայն տեղեկացված չէ փոխանցվող կամ պահվող տեղեկատվության բովանդակության մասին, այն նաեւ չի կարող այն վերահսկել,

43) ծառայություն մատուցողը կարող է օգտվել «պարզապես փոխանցելու» եւ «շտեմելու» համար նախատեսված ազատումից, երբ նա առհասարակ գործ չունի փոխանցվող տեղեկատվության հետ, ի թիվս այլոց, այն պահանջում է, որ ծառայություն մատուցողը չփոխի իր կողմից փոխանցվող տեղեկատվությունը, նշված պահանջը չի տարածվում տեղեկատվության փոխանցման ընթացքում տեղի ունեցող տեխնիկական բնույթի գործողությունների վրա, քանի որ դրանք չեն խախտում փոխանցվող տեղեկատվության ամբողջականությունը,

44) ծառայություն մատուցողը, ով անօրինական գործողություններ կատարելու նպատակով դիտավորությամբ համագործակցում է իր ծառայությունը ստացողներից մեկի հետ եւ սահմանազանցում է «պարզապես փոխանցելու» կամ «շտեմելու» գործառույթը, որի արդյունքում, չի կարող ազատվել կատարված գործողությունների համար սահմանված պատասխանատվությունից,

45) սույն Հրահանգով սահմանված միջնորդ ծառայություն մատուցողների պատասխանատվության սահմանափակումները չեն ներազդում տարբեր տեսակի՝ իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կանխող միջոցների հնարավորության վրա, նման իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կանխող միջոցներից են, մասնավորապես, դատարանների եւ իրականացված որեւէ խախտման դադարեցում կամ կանխում պահանջող, այդ թվում՝ անօրինական տեղեկատվության տարածումն արգելափակող կարգադրությունները,

46) պատասխանատվության սահմանափակումից օգտվելու նպատակով՝ տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություն, այդ թվում՝ տեղեկատվության պահման ծառայություն մատուցողն անօրինական գործողությունների վերաբերյալ փաստացի տեղեկատվություն ստանալու դեպքում պետք է արագ կերպով հանի համապատասխան տեղեկատվությունը կամ արգելափակիչ դրա

մատչելիությունը, տեղեկատվության հանումը կամ դրա մատչելիության արգելափակումը պետք է իրականացվի՝ հետետելով արտահայտման ազատության սկզբունքին եւ ազգային մակարդակով այս նպատակի համար սահմանված ընթացակարգերին, սույն Հրահանգը չի ներազդում անդամ պետությունների՝ հատուկ պահանջներ սահմանելու հնարավորության վրա, որոնք պետք է բավարարվեն. նախքան տեղեկատվության հանումը կամ դրա մատչելիության արգելափակումը,

47) անդամ պետությունները ծառայություն մատուցողների վրա չեն դնում միայն ընդհանուր բնույթի պարտավորությունների մասով վերահսկման պարտավորություն, սա չի վերաբերում հատուկ դեպքում վերահսկման պարտավորություններին եւ, մասնավորապես, չի ներազդում ազգային մարմինների կողմից տրված հրամաններին՝ ազգային օրենսդրությանը համապատասխան,

48) սույն Հրահանգը չի արգելում անդամ պետություններին պահանջելու, որպեսզի ծառայություն մատուցողները, որոնք ընդունում են իրենց կողմից մատուցված ծառայությունը ստացող անձանց տրամադրած տեղեկատվությունը, լինեն զգոն՝ բացահայտելու եւ կանխարգելելու անօրինական գործողությունների որոշ տեսակները, ինչն էլ բնականաբար ակնկալվում է նրանցից եւ նախանշված է ազգային իրավունքով,

49) անդամ պետությունները եւ Հանձնաժողովը պետք է խրախուսեն վարքագծի կանոնների մշակումը, նշված կանոնները չպետք է լինեն պարտադիր, եւ շահագրգիռ կողմերն իրենք պետք է որոշեն կիրառել նշված կանոնները,

50) կարելի է, որ տեղեկատվական հասարակության շրջանում հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների որոշ ասպեկտների ներդաշնակեցման մասին առաջարկված հրահանգը եւ սույն Հրահանգն ուժի մեջ մտնեն նույն ժամկետներում՝ ստեղծելու համար Համայնքի մակարդակով հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների խախտման համար միջնորդների պատասխանատվության հարցի հետ կապված կանոնների հստակ շրջանակ,

51) յուրաքանչյուր անդամ պետություն պետք է, հարկ եղած դեպքում, փոփոխի այն օրենսդրությունը, որը կարող է խոչընդոտել էլեկտրոնային եղանակներով վեճերի արտադատարանական լուծման մեխանիզմների կիրառմանը, նշված փոփոխության նպատակն է ապահովել նշված մեխանիզմների՝ օրենքով եւ գործնականում, նույնիսկ երկրի սահմաններից դուրս պատշաճ եւ արդյունավետ աշխատանքը,



52) ներքին շուկայի առումով ազատությունների արդյունավետ իրականացումն անհրաժեշտություն է առաջացնում տուժողների համար երաշխավորելու վեճերի լուծման մեխանիզմների արդյունավետ մատչելիությունը, տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների հետ կապված վնասը բնորոշվում է այն մատուցելու արագությամբ եւ աշխարհագրական ընդգրկվածությամբ, հաշվի առնելով դրա հատուկ բնույթը եւ անդամ պետությունների՝ միմյանց նկատմամբ փոխադարձ վստահությունը չչարաշահելու անհրաժեշտությունը՝ սույն Հրահանգով պահանջվում է անդամ պետություններից ապահովել համապատասխան դատական վարույթների մատչելիությունը, անդամ պետությունները պետք է ուսումնասիրեն համապատասխան էլեկտրոնային եղանակով դատական ընթացակարգերի մատչելիությունն ապահովելու անհրաժեշտությունը,

53) տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների նկատմամբ կիրառվող թիվ 98/27/ԵՀ հրահանգն ապահովում է իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները (անգործությունը) կանխելու վերաբերյալ հայցերի հարուցման հետ կապված մեխանիզմներ՝ ուղղված սպառողների կոլեկտիվ շահերի պաշտպանությանը, նշված մեխանիզմը կնպաստի տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների ազատ տեղաշարժին՝ ապահովելով սպառողների պաշտպանության բարձր մակարդակ,

54) սույն Հրահանգով նախատեսված պատժամիջոցները չեն հակասում ազգային օրենսդրությամբ նախատեսված որեւէ այլ պատժամիջոցին կամ իրավական պաշտպանության միջոցին, անդամ պետությունները չեն պարտավորվում նախատեսել քրեական պատժամիջոցներ սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթների խախտման համար,

55) սույն Հրահանգը չի ներազդում սպառողական պայմանագրերին վերաբերող պայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքի վրա, համապատասխանաբար սույն Հրահանգի կիրառումը չի կարող հանգեցնել նրան, որ սպառողը զրկվի իր բնակության վայրի անդամ պետության՝ պայմանագրային պարտավորություններին վերաբերող իրավունքի իմպերատիվ նորմերով վերապահված պաշտպանությունից,

56) ինչ վերաբերում է սպառողների կողմից կնքված պայմանագրերից բխող պայմանագրային պարտավորությունների մասով սույն Հրահանգով սահմանված

շեղմանը, նշված պարտավորությունները պետք է ներառեն պայմանագրի բովանդակության էական տարրերի, ներառյալ սպառողների իրավունքների վերաբերյալ տեղեկությունները, որոնք որոշիչ դեր են կատարում պայմանագրի կնքելու մասին որոշում կայացնելու հարցում,

57) Արդարադատության դատարանը վճռել է, որ անդամ պետությունը պետք է պահպանի այն ծառայություն մատուցողի նկատմամբ միջոցներ ձեռնարկելու իրավունքը, ով հաստատվել է մեկ այլ անդամ պետությունում, սակայն իր ամբողջ գործողությունները կամ դրանց մեծ մասն իրականացնում է առաջին անդամ պետությունում, եւ եթե նրա՝ տնտեսական գործունեություն իրականացնելու վայրի ընտրությունը կատարվել է՝ խուսափելու համար այն օրենսդրական պահանջների կատարումից, որոնք կկիրառվեն ծառայություն մատուցողի նկատմամբ, եթե նա տնտեսական գործունեություն իրականացնելու առաջին անդամ պետության տարածքում,

58) սույն Հրահանգը չպետք է տարածվի երրորդ երկրում տնտեսական գործունեություն իրականացնող ծառայություն մատուցողների կողմից մատուցված ծառայությունների վրա, հաշվի առնելով էլեկտրոնային առևտրի ծավալների մեծացումը՝ այնուամենայնիվ, պետք է ապահովել, որ Համայնքի կանոնները համապատասխանեն միջազգային կանոններին, սույն Հրահանգը չի հակասում իրավական խնդիրների վերաբերյալ միջազգային կազմակերպություններում կազմակերպված քննարկումների արդյունքներին (ի թիվս այլոց, ԱՀԿ, ՏՀԶԿ, Յունսիտրալ),

59) չնայած էլեկտրոնային հաղորդակցությունների գլոբալ բնույթին, անհրաժեշտ է ներքին շուկայի մասնատումից խուսափելու եւ Եվրոպական համապատասխան կարգավորիչ համակարգ ստեղծելու նպատակով Եվրոպական միության մակարդակով համաձայնեցնել ազգային կարգավորիչ միջոցները, նշված համաձայնեցումը պետք է նաեւ նպաստի միջազգային ֆորումներում բանակցող կողմերի ընդհանուր եւ ուժեղ դիրքորոշման ընդունմանը,

60) էլեկտրոնային առևտրի անխափան զարգացումն ապահովելու նպատակով իրավական համակարգը պետք է լինի հստակ եւ պարզ, կանխատեսելի եւ միջազգային մակարդակով կիրառվող կանոնների հետ համահունչ, որպեսզի այն բացասաբար չանդրադառնա Եվրոպական արդյունաբերության մրցունակության վրա կամ չխոչընդոտի նշված ոլորտում նորարարությունների ներմուծմանը,

61) եթե շուկան գլոբալացման համատեքստում պետք է փաստորեն գործի էլեկտրոնային միջոցներով, Եվրոպական միությունը եւ հիմնական ոչ եվրոպական տարածքները պետք է խորհրդակցեն միմյանց հետ՝ օրենքները եւ ընթացակարգերը համատեղելի դարձնելու նպատակով,

62) երրորդ երկրների, մասնավորապես թեկնածու երկրների, զարգացող երկրների եւ Եվրոպական միության առետրային այլ գործընկերների հետ համագործակցությունը էլեկտրոնային առետրի ոլորտում պետք է ամրապնդվի,

63) սույն հրահանգի ընդունումը չպետք է խոչընդոտի անդամ պետություններին հաշվի առնել տեղեկատվական հասարակության տարբեր սոցիալական, հանրային եւ մշակութային նշանակությունները, մասնավորապես այն չպետք է խոչընդոտի անդամ պետությունների՝ Համայնքի իրավունքին համահունչ որդեգրած միջոցներին՝ իրագործելու սոցիալական, մշակութային եւ ժողովրդավարական նպատակները՝ հաշվի առնելով նրանց լեզվաբանական բազմազանությունը, ազգային եւ տարածաշրջանային առանձնահատկությունները, ինչպես նաեւ դրանց մշակութային ժառանգությունը եւ հանրության համար ապահովելու ու մշտապես մատչելի դարձնելու հնարավորինս մեծ թվով տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունները, ամեն դեպքում տեղեկատվական հասարակության զարգացման արդյունքում Համայնքի քաղաքացիների համար պետք է մատչելի դարձվի թվայնացված եվրոպական մշակութային ժառանգությունը,

64) էլեկտրոնային հաղորդակցությունն առաջարկում է անդամ պետություններին մշակութային, կրթական եւ լեզվաբանական ոլորտներում հանրային ծառայություններ մատուցելու լավագույն միջոցներ,

65) Խորհուրդը՝ Տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների մշակման հարցում սպառողների ներգրավվածության մասին իր 1999 թվականի հունվարի 19-ի որոշմամբ (25) շեշտեց, որ այս ոլորտում սպառողների պաշտպանությունն արժանի է հատուկ ուշադրության, Հանձնաժողովը ուսումնասիրի սպառողների պաշտպանության գործող կանոններով տրամադրվող պաշտպանության անբավարար լինելու աստիճանը տեղեկատվական հասարակության համատեքստում եւ հարկ եղած դեպքում, բացահայտի սույն օրենսդրության թերությունները եւ այն խնդիրները, որոնց լուծման համար պահանջվում են լրացուցիչ միջոցների ձեռնարկում, Հանձնաժողովը, հարկ եղած դեպքում, պետք է հանդես գա՝ նշված

թերությունները վերացնելու լրացուցիչ հատուկ առաջարկներով, որոնց միջոցով դրանք պետք է որոշվեն,

ԸՆԴՈՒՆԵԼ ԵՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

## ԳԼՈՒԽ I

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### Հոդված 1

#### **Հրահանգի նպատակները եւ գործողության ոլորտը**

1. Սույն Հրահանգի նպատակն է նպաստել ներքին շուկայի պատշաճ գործունեությանը՝ ապահովելով անդամ պետությունների միջեւ տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների ազատ տեղաշարժին:
2. Սույն Հրահանգը, 1-գին պարբերությամբ սահմանված նպատակն իրագործելու համար, մոտարկում է ներքին շուկային, ծառայություններ մատուցողների հիմնադրմանը, առեւտրային հաղորդակցություններին, էլեկտրոնային պայմանագրերին, միջնորդների պարտականությանը, վարքագծի կանոններին, վեճերի արտադատական լուծումներին, անդամ պետությունների միջեւ դատական հայցերին եւ համագործակցությանը վերաբերող տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների վերաբերյալ որոշ ազգային դրույթներ:
3. Սույն Հրահանգով լրացվում է տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների նկատմամբ կիրառվող Համայնքի իրավունքը՝ չհակասելով մասնավորապես հանրային առողջապահության եւ սպառողների շահերի պաշտպանությանը, ինչպես սահմանված է դրանք կիրարկող Համայնքի իրավական ակտերով եւ ազգային օրենսդրությամբ, քանի որ այն չի սահմանափակում տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություններ մատուցելու ազատությունը:

4. Սույն Հրահանգով ոչ միայն չեն սահմանվում միջազգային մասնավոր իրավունքի լրացուցիչ կանոններ, այլև այն չի կարգավորում դատարանների իրավասությունը:

5. Սույն Հրահանգը չի կիրառվում՝

ա) հարկման ոլորտի նկատմամբ,

բ) թիվ 95/46/ԵՀ եւ 97/66/ԵՀ հրահանգներով կարգավորվող տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություններին վերաբերող հարցերի նկատմամբ,

գ) կարտելային իրավունքով կարգավորվող համաձայնություններին կամ գործելակերպերին վերաբերող հարցերի նկատմամբ,

դ) տեղեկատվական հասարակությանը բնորոշ հետեւյալ ծառայությունների նկատմամբ՝

- նոտարների կամ նմանատիպ մասնագիտություններ ունեցող անձանց գործունեությունը, որն ուղղակիորեն եւ հատուկ կերպով կապված է պետական իշխանության իրականացման հետ,

- դատարաններում հաճախորդին ներկայացնելը եւ նրա շահերի պաշտպանությունը,

- մոլեխաղերը, որոնք ներառում են շահումով խաղերում, ներառյալ վիճակախաղերում եւ տոտալիզատորներում դրամով խաղադրույքների կատարումը:

6. Սույն Հրահանգը չի ներառում Համայնքի իրավունքի մասով Համայնքի կամ ազգային մակարդակով ձեռնարկված միջոցների վրա՝ խթանելու համար մշակութային եւ լեզվական բազմազանությունը եւ ապահովելու բազմակարծության պաշտպանությունը:

## Հոդված 2

### **Հրահանգում օգտագործվող սահմանումները**

Սույն Հրահանգի նպատակով հետեւյալ հասկացությունները կիրառվում են հետեւյալ իմաստներով՝

ա) «տեղակատվական հասարակությանը բնորոշ ծառայություններ». թիվ 98/48/ԵՀ հրահանգով փոփոխված՝ թիվ 98/34/ԵՀ հրահանգի 1-ին հոդվածի 2-րդ կետի իմաստով ծառայություններ,

բ) «ծառայություններ մատուցող»՝ տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություն մատուցող ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ,

գ) «հաստատված ծառայություն մատուցող»՝ ծառայություն մատուցող, ով արդյունավետորեն իրականացնում է տնտեսական գործունեություն՝ ունենալով տնտեսական գործունեության իրականացման մշտական վայր անորոշ ժամկետով: Ծառայություն մատուցելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների եւ տեխնոլոգիաների առկայությունը եւ օգտագործումն ինքնին չի ենթադրում ծառայություն մատուցողի կողմից տնտեսական գործունեության իրականացում,

դ) «ծառայություն ստացող», ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով մասնագիտական կամ այլ նպատակներով օգտագործում է տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություն, մասնավորապես տեղեկատվություն հայթայթելու կամ այն մատչելի դարձնելու նպատակներով,

ե) «սպառող» ցանկացած ֆիզիկական անձ, որն իրականացնում է առետրային, ձեռնարկատիրական գործունեությամբ կամ մասնագիտությամբ չհետապնդվող նպատակներ,

զ) «առետրային հաղորդակցություն». ուղղակիորեն կամ անուղղակիորեն ապրանքները, ծառայությունները կամ ընկերության, կազմակերպության հեղինակությունը կամ առետրային, արդյունաբերական կամ արհեստի հետ կապված գործունեություն իրականացնող անձին կամ կարգավորվող մասնագիտության իրականացումը խթանելու համար նախատեսված ցանկացած տեսակի հաղորդակցություն: Հետեյալներն իրենցից չեն ներկայացնում առետրային հաղորդակցություն՝

- ընկերության, կազմակերպության կամ անձի գործունեությանն ուղղակի մատչելիությունն ապահովող տեղեկատվությունը, մասնավորապես տիրույթի անվանումը կամ էլեկտրոնային փոստի հասցեն,

- ապրանքների, ծառայությունների կամ ընկերությանը, կազմակերպությանը կամ անձին վերաբերող՝ անկախ կերպով հավաքված հաղորդակցությունները,

մասնավորապես, երբ վերջիններս հավաքվում են՝ չպահանջելով ֆինանսական փոխհատուցում,

է) «կարգավորվող մասնագիտություն». կա՛մ «Առնվազն երեք տարի տեւողությամբ մասնագիտական կրթությունն ու ուսուցումն ավարտելու համար շնորհված բարձրագույն կրթության վկայականների ճանաչման ընդհանուր համակարգի մասին» Խորհրդի 1988 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 89/48/ԵՏՀ հրահանգի 1(դ) հոդվածի կա՛մ թիվ 89/48/ԵՏՀ (27) հրահանգը լրացնելու համար «Մասնագիտական կրթությունը եւ ուսուցումը ճանաչելու երկրորդ ընդհանուր համակարգի մասին» Խորհրդի թիվ 92/51/ԵՏՀ հրահանգի 1(զ) հոդվածի իմաստով ցանկացած մասնագիտություն

ը) «համաձայնեցվող ոլորտ». տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություն մատուցողների կամ տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների նկատմամբ կիրառվող անդամ պետությունների իրավական համակարգերով սահմանվող պահանջները՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք կրում են ընդհանուր բնույթ, թե նախատեսված են հատուկ նրանց համար:

ի) համաձայնեցվող ոլորտն առնչվում է այնպիսի պահանջների հետ, որոնք պետք է բավարարի ծառայություն մատուցողը, երբ

- մատուցում է տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություն, ինչպես օրինակ՝ որակավորումներին, թույլտվությանը կամ ծանուցմանը վերաբերող պահանջները,

- իրականացնում է տեղեկատվական հասարակությանը բնորոշ գործունեություն, ինչպես օրինակ՝ ծառայություն մատուցողի վարքագծին ներկայացվող պահանջները, ծառայության որակին կամ բովանդակությանը ներկայացվող պահանջները, ներառյալ գովազդի ու պայմանագրերի նկատմամբ կիրառվող պահանջները կամ ծառայություն մատուցողի պարտականությանը վերաբերող պահանջները,

ii) Հետեւյալ պահանջները չեն ընդգրկում համաձայնեցվող ոլորտում՝

- որպես այդպիսին ապրանքների նկատմամբ կիրառվող պահանջները,

- ապրանքների մատուցմանը ներկայացվող պահանջները,

- էլեկտրոնային եղանակով չմատուցվող ծառայություններին ներկայացվող պահանջները:

### Հոդված 3

#### **Ներքին շուկա**

1. Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է ապահովի, որ իր տարածքում հիմնված ծառայություն մատուցողի կողմից տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների մատուցումը համապատասխանի տվյալ անդամ պետությունում կիրառվող ազգային դրույթներին, որոնք վրա տարածվում է համաձայնեցվող ոլորտը:

2. Անդամ պետությունները չեն կարող, համաձայնեցվող ոլորտի վրա չտարածվելու պատճառներով, սահմանափակել մեկ այլ անդամ պետությունից տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություններ մատուցելու ազատությունը:

3. 1-ին եւ 2-րդ պարբերությունները չպետք է կիրառվեն Հավելվածում նշված ոլորտների նկատմամբ:

4. 2-րդ պարբերությունից շեղում կատարելու նպատակով՝ անդամ պետությունները կարող են տեղեկատվական հասարակությանը բնորոշ կոնկրետ ծառայության մասով ձեռնարկել միջոցներ, եթե բավարարվում են հետեւյալ պայմանները՝

ա) միջոցները.

i) անհրաժեշտ է ձեռնարկել հետեւյալ պատճառներից մեկով

- հանրային կարգի պահպանման նպատակով, մասնավորապես հանցանքների կանխման, հետաքննության, բացահայտման եւ հետապնդման, այդ թվում՝ անչափահասների պաշտպանության եւ ռասայի, սեռի, կրոնի կամ քաղաքացիության հիմքով թշնամության դրդման ցանկացած դրսեւորման եւ անհատ անձանց մարդկային արժանապատվության ոտնահարման դեմ պայքարի նպատակով,

- հանրային առողջապահության նպատակով,

- հանրային անվտանգության, այդ թվում՝ ազգային անվտանգության եւ պաշտպանության ապահովման նպատակով,



- սպառողների, այդ թվում՝ ներդրողների պաշտպանության նպատակով,
- ii) պետք է ձեռնարկել (i) կետում նշված նպատակների իրագործմանը կամ նշված նպատակների իրագործմանը լուրջ վտանգ ներկայացնող տեղեկատվական հասարակությանը բնորոշ տվյալ ծառայության դեմ,
- iii) պետք է համամասն լինեն նշված նպատակներին,
- բ) նախքան տվյալ միջոցների ձեռնարկումը եւ, չհակասելով դատավարություններին, այդ թվում՝ քրեական վարույթի շրջանակներում իրականացված նախնական վարույթներին եւ գործողություններին, անդամ պետությունը
- դիմել է 1-ին պարբերությամբ նշված անդամ պետությանը ձեռնարկել միջոցներ, եւ վերջինս չի ձեռնարկել նշված միջոցները կամ ձեռնարկել է անհամարժեք միջոցներ,
- ծանուցել է Հանձնաժողովին եւ 1-ին պարբերությամբ նշված անդամ պետությանը նշված միջոցներ ձեռնարկելու իր մտադրության մասին:

5. Անդամ պետությունները կարող են, հրատապության դեպքում, շեղում կատարել 4 պարբերության (բ) կետով սահմանված պայմաններից: Նման դեպքում ձեռնարկված միջոցների մասին պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում ծանուցվի Հանձնաժողովին եւ 1-ին պարբերությամբ նշված անդամ պետությանը՝ նշելով հրատապ գործելու պատճառները:

6. Չսահմանափակելով անդամ պետության՝ տվյալ միջոցները ձեռնարկելու հնարավորությունը՝ Հանձնաժողովը հնարավորինս սեղմ ժամկետներում ուսումնասիրում է ծանուցված միջոցների համապատասխանությունը Համայնքի իրավունքին, եթե պարզվում է, որ ձեռնարկված միջոցը չի համապատասխանում Համայնքի իրավունքին, Հանձնաժողովը պետք է դիմի տվյալ անդամ պետությանը ձեռնպահ մնալ առաջարկված որեւէ միջոցի ձեռնարկումից կամ անհապաղ դադարեցնել տվյալ միջոցների ձեռնարկումը:

**ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

**Մաս 1. Տնտեսական գործունեության իրականացման վայրին և տեղեկատվությանը ներկայացվող պահանջները**

Հոդված 4

**Նախնական թույլտվությունը բացառող սկզբունքը**

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություն մատուցողի գործունեության նախաձեռնման և իրականացման համար անհրաժեշտ չլինի նախնական թույլտվության ստացում կամ համանման ցանկացած այլ պահանջի բավարարում:

2. 1-ին պարբերությունը չպետք է հակասի թույլտվություն ստանալու համակարգերին, որոնք ուղղված չեն հատուկ և բացառապես տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություններին, կամ որոնք կարգավորվում են «Հեռահաղորդակցության ծառայությունների ոլորտում ընդհանուր թույլտվությունների և անհատական լիցենզիաների ընդհանուր համակարգի մասին» Խորհրդի և Եվրոպական պառլամենտի 1997 թվականի ապրիլի 10-ի թիվ 97/13/ԵՀ հրահանգով (28):

Հոդված 5

**Ներկայացվելիք ընդհանուր տեղեկությունները**

1. Ի հավելումն Համայնքի իրավունքով սահմանված տեղեկատվությանը ներկայացվող այլ պահանջներին՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ծառայություն ստացողի և իրավասու մարմինների համար հեշտությամբ, ուղղակիորեն և մշտապես մատչելի լինեն ծառայություն մատուցողի մասին առնվազն հետևյալ տեղեկությունները՝

ա) ծառայություն մատուցողի անունը,

բ) գործունեության իրականացման վայրի հասցեն,

գ) ծառայություն մատուցողի վերաբերյալ այլ մանրամասները, այդ թվում՝ նրա էլեկտրոնային փոստի հասցեն, որը հնարավորություն կտա արագ կերպով կապ հաստատել եւ ուղղակիորեն ու արդյունավետ կերպով հաղորդակցվել նրա հետ,

դ) առևտրային կամ համանման պետական ռեգիստրում գրանցված լինելու դեպքում այն առևտրային ռեգիստրը, որտեղ ծառայություն մատուցողը գրանցված է եւ նրա գրանցման համարը կամ տվյալ ռեգիստրում նրան նույնացնելու համարժեք միջոցները,

ե) եթե գործունեության իրականացման համար անհրաժեշտ է թույլտվության ստացում, համապատասխան վերահսկիչ մարմնի վերաբերյալ մանրամասն տեղեկությունները,

զ) ինչ վերաբերում է կարգավորվող մասնագիտություններին

- ցանկացած մասնագիտական մարմին կամ համանման կառույց, որտեղ ծառայություն մատուցողը գրանցված է,

- մասնագիտական կոչումը եւ վերջինս շնորհած անդամ պետությունը,

- տնտեսական գործունեության իրականացման վայրի անդամ պետությունում կիրառվող մասնագիտական կանոններին հղումը եւ դրանցից օգտվելու միջոցները,

է) եթե ծառայություն մատուցողը ձեռնարկում է ԱԱՀ-ով հարկվող գործունեություն, «Շրջանառության հարկերին վերաբերող անդամ պետությունների օրենքների ներդաշնակեցման մասին. Ավելացված արժեքի հարկի ընդհանուր համակարգի մասին» Խորհրդի 1977 թվականի մայիսի 17-ի վեցերորդ հրահանգի 22-րդ հոդվածի 1-ին կետում նշված նույնականացման համարը գնահատման միասնական հիմքն է (29):

2. Ի հավելումն տեղեկատվությանը ներկայացվող Համայնքի իրավունքով սահմանված այլ պահանջներին՝ անդամ պետությունները պետք է առնվազն ապահովեն, որ տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների գների սահմանված լինելու դեպքում դրանց հստակ եւ միանշանակ նշվեն, եւ, մասնավորապես, նշվեն, թե արդյոք ծառայության գնի մեջ ներառված են հարկերը եւ առաքման ծախսերը:

## **Մաս 2: Առեւտրային հաղորդագրությունները**

### **Հոդված 6**

#### **Տրամադրվելիք տեղեկությունները**

Ի հավելումն տեղեկատվությանը ներկայացվող Համայնքի իրավունքով սահմանված այլ պահանջներին՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայության մաս կազմող առեւտրային հաղորդագրություններն առնվազն համապատասխանեն հետեւյալ պայմաններին՝

ա) առեւտրային հաղորդագրությունը պետք է լինի, որպես այդպիսին, հստակ տարբերակելի,

բ) պետք է հստակ բացահայտելի լինի այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի անունից ուղարկվում է առեւտրային հաղորդագրությունը,

գ) եթե տնտեսական գործունեության իրականացման վայրի անդամ պետությունում թույլատրվում են գովազդային առաջարկները՝ զեղչերը, մրցանակները եւ նվերները, դրանք պետք է լինեն, որպես այդպիսին, հստակ տարբերակելի, եւ պայմանները, որոնք պետք է բավարարվեն դրանցից օգտվելու համար, պետք լինեն մատչելի եւ ներկայացվեն հստակ ու միանշանակ,

դ) եթե տնտեսական գործունեության իրականացման վայրի անդամ պետությունում թույլատրվում են գովազդելու նպատակով կազմակերպված մրցույթները կամ խաղերը, դրանք պետք է լինեն, որպես այդպիսին, հստակ տարբերակելի, եւ մասնակցության պայմանները պետք է լինեն մատչելի եւ ներկայացվեն հստակ ու միանշանակ:

## Հոդված 7

### **Անցանկալի առետրային հաղորդագրությունը**

1. Ի հավելումն տեղեկատվությանը ներկայացվող Համայնքի իրավունքով սահմանված այլ պահանջներին՝ անդամ պետությունները, որոնք թույլատրում են էլեկտրոնային փոստով անցանկալի առետրային հաղորդագրության տարածումը, պետք է ապահովեն, որ իրենց տարածում տնտեսական գործունեություն իրականացնող ծառայություն մատուցողի կողմից ուղարկված նման առետրային հաղորդագրությունը լինի հստակ եւ միանշանակ տարբերակելի, երբ ստացվի հաղորդագրությունը ստացողի կողմից:

2. Չհակասելով թիվ 97/7/ԵՀ եւ 97/66/ԵՀ հրահանգներին՝ անդամ պետությունները պետք է ձեռնարկեն միջոցներ՝ ապահովելու, որ էլեկտրոնային փոստով անցանկալի առետրային հաղորդագրությունների տարածմամբ զբաղվող ծառայություն մատուցողները պարբերաբար ծանոթանան եւ հարգեն այն ռեգիստրները, որտեղ կարող են գրանցվել առետրային հաղորդագրություններ ստանալ չցանկացող ֆիզիկական անձինք:

## Հոդված 8

### **Կարգավորվող մասնագիտություններ**

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ կարգավորվող մասնագիտության ներկայացուցչի կողմից մատուցվող տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայության մաս հանդիսացող կամ կազմող առետրային հաղորդագրությունների օգտագործումը թույլատրվի՝ մասնավորապես մասնագիտական անկախության, արժանապատվության եւ պատվի, մասնագիտական գաղտնիության եւ տվյալ մասնագիտության ներկայացուցիչների հաճախորդների եւ այդ մասնագիտության այլ ներկայացուցիչների նկատմամբ արդարության մասնագիտական կանոններին համապատասխան:

2. Չհակասելով մասնագիտական մարմինների եւ ասոցիացիաների անկախությանը՝ անդամ պետությունները եւ Հանձնաժողովը պետք է խրախուսեն մասնագիտական ասոցիացիաներին եւ մարմիններին Համայնքի մակարդակով ստեղծել վարքագծի կանոնագրքեր՝ որոշելու տեղեկատվության այն տեսակները, որոնք կարող են տրամադրվել առետրային հաղորդագրության նպատակներից ելնելով՝ 1-ին պարբերությամբ նշված կանոններին համապատասխան:

3. Համայնքի մակարդակով իրականացվելիք նախաձեռնությունների համար առաջարկներ մշակելիս, որոնք կարող են անհրաժեշտ լինել 2-րդ պարբերությամբ նշված տեղեկատվության մասով ներքին շուկայի պատշաճ գործունեությունն ապահովելու համար, Հանձնաժողովը պետք է պատշաճ կերպով հաշվի առնի Համայնքի մակարդակով կիրառվող վարքագծի կանոնագրքերը եւ պետք է սերտորեն համագործակցի համապատասխան մասնագիտական ասոցիացիաների եւ մարմինների հետ:

4. Սույն Հրահանգը պետք է կիրառվի կարգավորվող մասնագիտությունների գծով գործունեությունների մատչելիության եւ իրականացման վերաբերյալ Համայնքի հրահանգների հետ միասին:

### **Մաս 3: Էլեկտրոնային եղանակով կնքվող պայմանագրերը**

#### **Հոդված 9**

#### **Պայմանագրերի նկատմամբ կիրառվող ռեժիմը**

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ իրենց իրավական համակարգը թույլատրի պայմանագրերի՝ էլեկտրոնային եղանակով կնքումը: Անդամ պետությունները պետք է մասնավորապես ապահովեն, որ պայմանագրային գործընթացի նկատմամբ կիրառվող իրավական պահանջները ոչ միայն չխոչընդոտեն էլեկտրոնային պայմանագրերի կիրառմանը, այլ նաեւ չհանգեցնեն էլեկտրոնային եղանակով կնքված լինելու հիմքով պայմանագրերի իրավաբանական ուժը եւ վավերությունը կորցնելուն:

2. Անդամ պետությունները կարող են սահմանել, որ 1-ին պարբերությունը չկիրառվի հետեյալ տեսակներից մեկի մեջ մտնող բոլոր կամ որոշ պայմանագրերի նկատմամբ՝

ա) անշարժ գույքի, բացառությամբ վարձույթով տալու իրավունքների նկատմամբ իրավունք ստեղծող կամ փոխանցող պայմանագրեր,

բ) օրենքով դատարանների, պետական մարմինների կամ պետական կառավարման ոլորտի մասնագիտությունների ներգրավում պահանջող պայմանագրեր,

գ) առետրային, ձեռնարկատիրական կամ մասնագիտական գործունեության շրջանակներից դուրս գործունեություն իրականացնող անձանց կողմից որպես ապահովություն կնքվող երաշխավորության պայմանագրեր եւ գրավով ապահովման մասին պայմանագրեր,

դ) ընտանեկան իրավունքով կամ իրավահաջորդության իրավունքով կարգավորվող պայմանագրեր:

3. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին ներկայացնեն 2-րդ պարբերությունում նշված այն տեսակների մասին, որոնց նկատմամբ չի կիրառվում 1-ին պարբերությունը: Անդամ պետությունները յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ Հանձնաժողովին են ներկայացնում 2-րդ պարբերության իրականացման վերաբերյալ զեկույց՝ բացատրելով, թե ինչու են նրանք անհրաժեշտ համարում պահպանել 2 պարբերության (բ) կետում նշված տեսակը, որոնց նկատմամբ կիրառվում է 1-ին պարբերությունը:

## Հոդված 10

### **Տրամադրվելիք տեղեկությունները**

1. Ի լրումն տեղեկատվությանը ներկայացվող՝ Համայնքի իրավունքով սահմանված այլ պահանջներին, անդամ պետություններն ապահովում են, որ սպառող չհանդիսացող կողմերի միջեւ այլ համաձայնություն չլինելու դեպքում, ծառայություն մատուցողը հստակ, հասկանալի եւ միանշանակ կերպով տրամադրի առնվազն հետեյալ տեղեկությունները եւ նախքան ծառայություն ստացողի կողմից պատվերը ներկայացնելը՝

- ա) պայմանագիր կնքելու համար տարբեր տեխնիկական պայմանների բավարարումը,
- բ) արդյոք կնքված պայմանագիրը կներկայացվի ծառայություն մատուցողի կողմից եւ այդոք այն կլինի մատչելի,
- գ) նախքան պատվերը ներկայացնելը մուտքագրման սխալների բացահայտման եւ դրանց ուղղման տեխնիկական միջոցները,
- դ) պայմանագրի կնքման լեզուները:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ սպառող չհանդիսացող կողմերի միջեւ այլ համաձայնություն չլինելու դեպքում ծառայություն մատուցողը նշի վարքագծի այն համապատասխան կանոնագիրքը, որին նա հետեւում է եւ այն տեղեկությունները, թե ինչպես կարելի է էլեկտրոնային եղանակով օգտվել նշված կանոնագրքերից:

3. Պայմանագրի ժամկետները եւ ընդհանուր պայմանները պետք է տեղեկատվություն ստացողին ներկայացվեն այնպես, որպեսզի նա կարողանա դրանք պահել եւ վերարտադրել:

4. 1-ին եւ 2-րդ պարբերությունները չեն տարածվում այն պայմանագրերի վրա, որոնք կնքված են բացառապես էլեկտրոնային հաղորդագրության փոխանակմամբ կամ համարժեք առանձին հաղորդակցության միջոցներով:

## Հոդված 11

### **Պատվերի տեղաբաշխումը**

1. Սպառող չհանդիսացող կողմերի միջեւ այլ համաձայնություն չլինելու դեպքում անդամ պետություններն ապահովում են, որ այն դեպքերում, երբ ծառայություն ստացողը տեղաբաշխում է իր պատվերը տեխնոլոգիական միջոցներով, կիրառվում են հետեւյալ սկզբունքները՝

- ծառայություն մատուցողը պետք է ընդունի ստացողի պատվերը ստանալու փաստն առանց անհարկի ձգձգումների եւ էլեկտրոնային եղանակով,
- պատվերը եւ դրա ստացման վերաբերյալ հաստատումը համարվում են ստացված, երբ հասցեատերերի համար այն դառնում է մատչելի:



2. Անդամ պետություններն ապահովում են, որ սպառող չհանդիսացող կողմերի միջև այլ համաձայնություն չլինելու դեպքում ծառայություն մատուցողը ծառայությունը ստացողի համար մատչելի դարձնի համապատասխան, արդյունավետ եւ մատչելի տեխնիկական միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս նրան բացահայտել եւ ուղղել մուտքագրման սխալները նախքան պատվերի տեղաբաշխումը:

3. 1-ին պարբերության 1-ին պարբերությո՞ւնը եւ 2-րդ պարբերությունը չեն տարածվում բացառապես էլեկտրոնային հաղորդագրության փոխանակմամբ կամ համարժեք առանձին հաղորդակցության միջոցներով կնքված պայմանագրերի վրա:

#### **Մաս 4. Միջնորդ ծառայություն մատուցողների պատասխանատվությունը**

Հոդված 12

##### **«Պարզապես փոխանցել»**

1. Եթե մատուցվում է տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություն, որը ներառում է ծառայություն ստացողի կողմից տրամադրված տեղեկատվության՝ հաղորդակցության ցանցով փոխանցումը կամ հաղորդակցության ցանցի մատչելիության ապահովումը, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ծառայություն մատուցողը պատասխանատվություն չկրի փոխանցված տեղեկատվության համար՝ պայմանով, որ ծառայություն մատուցողը՝

ա) չի նախաձեռնում տեղեկատվության փոխանցումը,

բ) չի ընտրում փոխանցված տեղեկատվությունը ստացողին,

գ) չի ընտրում կամ փոխում փոխանցվող տեղեկատվությունը:

2. 1-ին պարբերությամբ նշված տեղեկությունների փոխանցումը եւ մատչելիության ապահովումը ներառում է փոխանցված տեղեկատվության ավտոմատ, միջանկյալ եւ կարճաժամկետ պահումը, քանի որ այն կատարվում է միայն հաղորդակցության ցանցում տեղեկատվության փոխանցման նպատակով եւ պայմանով, որ

տեղեկատվությունը չի պահվում ավելի երկար ժամանակով, քան անհրաժեշտ է փոխանցման համար:

3. Սույն Հոդվածը չի սահմանափակում, անդամ պետությունների իրավական համակարգերին համապատասխան, դատարանի կամ վարչական իշխանության իրավասությունը՝ պահանջելու ծառայություն մատուցողից վերացնել կամ կանխել թույլ տրված իրավախախտումը:

### Հոդված 13

#### «Շտեմումը»

1. Եթե մատուցվում է տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություն, որը ներառում է ծառայություն ստացողի կողմից տրամադրված տեղեկատվության՝ հաղորդակցության ցանցով փոխանցումը, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ծառայություն մատուցողը պատասխանատվություն չկրի այդ տեղեկատվության ավտոմատ, միջանկյալ եւ ժամանակավոր պահման համար, որի կատարման միակ նպատակը ծառայություն ստացողի խնդրանքով տեղեկատվության հետագա փոխանցումն է, պայմանով, որ

ա) մատուցողը չի փոխում տեղեկատվությունը,

բ) մատուցողը բավարարում է տեղեկատվության մատչելիության վերաբերյալ պայմանները,

գ) մատակարարը պահպանում է տեղեկատվության թարմացմանը վերաբերող՝ արդյունաբերության մեջ լայն ճանաչում ունեցող եւ լայնորեն կիրառվող կանոնները,

դ) մատակարարը տեղեկատվության օգտագործման վերաբերյալ տվյալներ ձեռքբերելու համար չի միջամտում լայն ճանաչում ունեցող եւ արդյունաբերության մեջ լայնորեն կիրառվող տեխնոլոգիայի օրինական օգտագործմանը,

ե) մատակարարը պետք է արագ կերպով գործի՝ հանելու իր կողմից պահված տեղեկատվությունը կամ արգելափակելու դրա մատչելիությունը, երբ տեղեկանա, որ փոխանցման առաջնային աղբյուրում տեղեկատվությունը հանվել է ցանցից կամ

արգելափակվել է դրա մատչելիությունը կամ դատարանը կամ վարչական մարմինը պատվիրել են տեղեկատվության հանումը կամ դրա մատչելիության արգելափակումը:

2. Սույն Հոդվածը չի սահմանափակում, անդամ պետությունների իրավական համակարգերին համապատասխան, դատարանի կամ վարչական իշխանության իրավասությունը՝ պահանջելու ծառայություն մատուցողից վերացնել կամ կանխել թույլ տրված իրավախախտումը:

#### Հոդված 14

### **Տեղեկատվության տեղաբաշխում**

1. Եթե մատուցվում է տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություն, որը ներառում է ծառայություն ստացողի կողմից տրամադրված տեղեկատվության պահումը, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ծառայություն մատուցողը պատասխանատվություն չկրի ծառայություն ստացողի խնդրանքով պահված տեղեկատվության համար՝ պայմանով, որ

ա) մատուցողը տեղյակ չէ կամ չունի տեղեկություններ անօրինական գործողության մասին եւ, ինչ վերաբերում է վնասի հատուցմանը, տեղեկացված չէ այն փաստերի կամ հանգամանքների մասին, որոնք վկայում են անօրինական գործողության կամ տեղեկատվության մասին,

բ) նման տեղեկություն ստանալով՝ մատուցողը արագ կերպով գործում է՝ հանելու տեղեկատվությունը կամ արգելափակելու դրա մատչելիությունը:

2. 1-ին պարբերությունը չի կիրառվում, երբ ծառայություն ստացողը գործում է ծառայություն մատուցողի լիազորության կամ վերահսկողության ներքո:

3. Սույն Հոդվածը ոչ միայն չի սահմանափակում, անդամ պետությունների իրավական համակարգերին համապատասխան, դատարանի կամ վարչական իշխանության իրավասությունը՝ պահանջելու ծառայություն մատուցողից վերացնել կամ կանխել թույլ տրված իրավախախտումը, այլ նաեւ չի սահմանափակում անդամ պետությունների իրավասությունը՝ սահմանելու տեղեկատվության հանումը կամ դրա մատչելիության կասեցումը կարգավորող ընթացակարգերը:

## Հողված 15

### **Դիտանցման ընդհանուր պարտավորություն չսահմանելը**

1. Անդամ պետությունները, 12-րդ, 13-րդ եւ 14-րդ հոդվածներով կարգավորվող ծառայություններ մատուցելիս, ծառայություն մատուցողների համար չեն սահմանում ինչպես իրենց կողմից փոխանցվող կամ պահվող տեղեկատվության բովանդակության դիտանցման, այնպես էլ անօրինական գործողությունների մասին խոսող փաստերի կամ հանգամանքների որոնման ընդհանուր պարտավորություն:

2. Անդամ պետությունները կարող են տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություն մատուցողների համար սահմանել պարտավորություններ՝ ժամանակին տեղեկացնելու իրավասու պետական մարմիններին իրականացված ենթադրյալ անօրինական գործողությունների կամ իրենց ծառայությունը ստացողների կողմից տրամադրված տեղեկատվության մասին կամ կարող են սահմանել պարտավորություններ՝ տրամադրելու իրավասու մարմիններին, վերջիններիս խնդրանքով, իրենց ծառայությունը ստացողների նույնականացումը հնարավոր դարձնող տեղեկատվությունը, որոնց հետ նրանք կնքել են տեղեկատվությունը պահելու պայմանագրեր:

ԳԼՈՒԽ III

### **ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

## Հողված 16

### **Վարքագծի կանոնագրքերը**

1. Անդամ պետությունները եւ Հանձնաժողովը խրախուսում են՝

ա) Համայնքի մակարդակով առեւտրային, մասնագիտական եւ սպառողական ասոցիացիաների կամ կազմակերպությունների կողմից վարքագծի կանոնագրքերի մշակումը, որը նախատեսված է նպաստելու 5-15-րդ հոդվածների պատշաճ իրականացմանը,

բ) ազգային կամ Համայնքի մակարդակով վարքագծի կանոնագրքերի նախնական տարբերակների կամավոր փոխանցումը Հանձնաժողովին,

գ) էլեկտրոնային եղանակով նշված վարքագծի կանոնագրքերի մատչելիությունը Համայնքի լեզուներով,

դ) առեւտրային, մասնագիտական եւ սպառողական ասոցիացիաների կամ կազմակերպությունների կողմից վարքագծի կանոնագրքերի իրականացման գործընթացի գնահատման եւ էլեկտրոնային առեւտրին վերաբերող գործելակերպերի, սովորություններին կամ սովորույթների վրա դրանց ազդեցության վերաբերյալ զեկույցի տրամադրումն անդամ պետություններին եւ Հանձնաժողովին,

ե) անչափահասների եւ մարդու արժանապատվության պաշտպանությանը վերաբերող վարքագծի կանոնագրքերի մշակումը,

2. Անդամ պետությունները եւ Հանձնաժողովը խրախուսում են սպառողներին ներկայացնող ասոցիացիաների կամ կազմակերպությունների ներգրավումը վարքագծի կանոնագրքերի մշակման եւ իրականացման գործընթացում, որոնք ներազդում են սպառողների շահերի վրա եւ մշակված են 1 պարբերության (ա) կետին համապատասխան: Հարկ եղած դեպքում պետք է խորհրդակցել թույլ տեսողությամբ եւ հաշմանդամ անձանց ներկայացնող ասոցիացիաների հետ՝ հաշվի առնելու նրանց հատուկ կարիքները:

Հոդված 17

### **Վեճերի արտադատարանային լուծումը**

1. Անդամ պետություններն ապահովում են, որպեսզի, տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություն մատուցողի եւ այդ ծառայությունը ստացողի միջեւ անհամաձայնության դեպքում, իրենց օրենսդրությունը չխոչընդոտի վեճերի

կարգավորման համար ազգային իրավունքով նախատեսված արտադատարանական մեխանիզմների այդ թվում՝ վեճերի լուծման էլեկտրոնային միջոցների օգտագործմանը:

2. Անդամ պետությունները խթանում են սպառողական վեճերի արտադատական կարգավորման համար պատասխանատու մարմիններին գործելու այնպես, որը շահագրգիռ կողմերին կտրամադրի համարժեք ընթացակարգային երաշխիքներ:

3. Անդամ պետությունները խթանում են վեճերի արտադատական կարգավորման համար պատասխանատու մարմիններին տեղեկացնել Հանձնաժողովին տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների վերաբերյալ կայացված լուրջ որոշումների մասին եւ փոխանցել էլեկտրոնային առետրին վերաբերող գործելակերպերի, սովորությունների կամ սովորույթների վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություններ:

## Հոդված 18

### Հայցատեսակները

1. Անդամ պետություններն ապահովում են, որ տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայություններին առնչվող գործունեությանը վերաբերող ազգային իրավունքով նախատեսված հայցատեսակները հնարավոր դարձնեն միջոցների, այդ թվում՝ ժամանակավոր միջոցների անհապաղ ընդունումը, որոնք ուղղված են դադարեցնելու ցանկացած ենթադրյալ խախտում եւ կանխելու համապատասխան շահերի հետագա սահմանափակումը:

2. Թիվ 98/27/ԵՀ հրահանգի հավելվածում կատարել հետեւյալ լրացումները՝

«11. Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2000 թվականի հունիսի 8-ի թիվ 2000/31/ԵՀ կանոնակարգ «Տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների, մասնավորապես, ներքին շուկայում էլեկտրոնային առետրի որոշ իրավական ասպեկտների մասին» (էլեկտրոնային առետրի մասին հրահանգ) (ՊՏ թիվ L 178, 17.7.2000թ., էջ 1):

**Համագործակցությունը**

1. Անդամ պետությունները պետք է ունենան սույն Հրահանգի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ վերահսկման եւ ուսումնասիրման համապատասխան միջոցներ եւ ապահովեն, որպեսզի ծառայություն մատուցողները նրանց տրամադրեն անհրաժեշտ տեղեկատվություն:

2. Անդամ պետությունները պետք է համագործակցեն այլ անդամ պետությունների հետ: Այս նպատակով նրանք պետք է նշանակեն մեկ կամ մի քանի համակարգողները, որոնց մասին մանրամասն տվյալները տրամադրում են այլ անդամ պետություններին եւ Հանձնաժողովին:

3. Անդամ պետությունները պետք է, հնարավորինս արագ եւ ազգային իրավունքին համահունչ, այլ անդամ պետությունների կամ Հանձնաժողովի խնդրանքով տրամադրեն աջակցություն եւ տեղեկատվություն, այդ թվում՝ համապատասխան էլեկտրոնային միջոցներով:

4. Անդամ պետությունները նշանակում են համակարգողներ, որոնց հետ գոնե կարելի է կապ հաստատել էլեկտրոնային միջոցներով եւ որոնցից սպառողները եւ ծառայություն մատուցողները կարող են՝

ա) ձեռք բերել պայմանագրային իրավունքների եւ պարտավորությունների, ինչպես նաեւ վեճերի ժամանակ գործող բողոքարկման եւ իրավունքի պաշտպանության մեխանիզմների , այդ թվում՝ նշված մեխանիզմների օգտագործման գործնական մոտեցումների մասին ընդհանուր տեղեկատվություն,

բ) ձեռք բերել այն մարմինների, ասոցիացիաների կամ կազմակերպությունների մասին մանրամասները, որոնցից նրանք կարող են ստանալ լրացուցիչ տեղեկություններ կամ գործնական օժանդակություն:

5. Անդամ պետությունները խթանում են տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների եւ էլեկտրոնային առետուրին վերաբերող գործելակերպերի, սովորությունների եւ սովորույթների մասով իրենց տարածքում ծագած վեճերի վերաբերյալ կայացված որեւէ լուրջ վարչական կամ դատական որոշումների մասին

Հանձնաժողովին տեղեկացնելը: Հանձնաժողովն այս որոշումների մասին հաղորդում է այլ անդամ պետություններին:

Հոդված 20

### **Պատժամիջոցները**

Անդամ պետությունները սահմանում են սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթների խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցները եւ ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու դրանց կիրարկումը: Սահմանված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համամասնական եւ տարհամոզիչ:

ԳԼՈՒԽ IV

### **ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Հոդված 21

### **Վերանայում**

1. Նախքան 2003 թվականի հուլիսի 17-ը եւ դրանից հետո յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ, Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտին, Խորհրդին ու Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեին է ներկայացնում սույն Հրահանգի կիրառման վերաբերյալ զեկույց, որին կցվում են, անհրաժեշտության դեպքում, հրահանգը տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների ոլորտում արձանագրված իրավական, տեխնիկական եւ տնտեսական զարգացումներին համապատասխանեցնելու համար առաջարկները, մասնավորապես հանցագործությունների կանխման, անչափահասների, սպառողների պաշտպանության եւ ներքին շուկայի պատշաճ գործունեության առումով:



2. Ուսումնասիրելով սույն Հրահանգի համապատասխանեցման անհրաժեշտությունը՝ զեկույցում վերլուծվում է, մասնավորապես, գերկապեր եւ որոնման համակարգի ծառայություններ մատուցողների պատասխանատվության, «սուտ բովանդակության հայտնաբերում եւ վերացում» ընթացակարգերի եւ սուտ բովանդակությունը վերացնելուց հետո պատասխանատվության սահմանման վերաբերյալ առաջարկների անհրաժեշտությունը: Զեկույցում վերլուծվում է նաեւ տեխնիկական զարգացումների լրյսի ներքո 12-րդ եւ 13-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությունից ազատելու լրացուցիչ պայմանների առկայության անհրաժեշտությունը եւ ներքին շուկայի սկզբունքների՝ էլեկտրոնային փոստով ուղարկվող առետրային հաղորդագրությունների նկատմամբ կիրառելու հնարավորությունը:

## Հոդված 22

### **Փոխատեղումը**

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի հետ համապատասխանելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական դրույթները նախքան 2002 թվականի հունվարի 17-ը: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Երբ անդամ պետություններն ընդունում են 1-ին պարբերությամբ նշված միջոցները, ապա դրանք պետք է պարունակեն սույն Հրահանգին կատարված հղում կամ իրենց պաշտոնական հրապարակման պահին պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

## Հոդված 23

### **Ուժի մեջ մտնելը**

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվանից:

Հոդված 24

### Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Լյուքսեմբուրգում 2000 թվականի հունիսի 8-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ՝

Ն. Ֆոնտեն

Խորհրդի կողմից՝

Նախագահ՝

Գ. դի Օլիվիերա Մարտինս

1) ՊՏ թիվ C 30, 5.2.1999թ., էջ 4:

2) ՊՏ թիվ C 169, 16.6.1999թ., էջ 36:

- 3) Եվրոպական պառլամենտի 1999 թվականի մայիսի 6-ի եզրակացություն (ՊՏ թիվ C 279, 1.10.1999թ., էջ 389), Խորհրդի 2000 թվականի փետրվարի 28-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ թիվ C 128, 8.5.2000թ., էջ 32) եւ Եվրոպական պառլամենտի 2000 թվականի մայիսի 4-ի որոշում (դեռ չի հրապարակվել պաշտոնական տեղեկագրում):
- 4) ՊՏ L 298, 17.10.1989թ., էջ 23: Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 97/36/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 202, 30.7.1997թ., էջ 60):
- 5) ՊՏ թիվ L 95, 21.4.1993թ., էջ 29:
- 6) ՊՏ թիվ L 144, 4.6.1999թ., էջ 19:
- 7) ՊՏ L 250, 19.9.1984թ., էջ 17: Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 97/55/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 290, 23.10.1997թ., էջ 18):
- 8) ՊՏ L 42, 12.2.1987թ., էջ 48: Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 98/7/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 101, 1.4.1998թ., էջ 17):
- 9) ՊՏ L 141, 11.6.1993թ., էջ 27: Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 9/97/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 84, 26.3.1997թ., էջ 22):
- 10) ՊՏ թիվ L 158, 23.6.1990թ., էջ 59:
- 11) ՊՏ թիվ L 80, 18.3.1998թ., էջ 27:
- 12) ՊՏ թիվ L 228, 11.8.1992թ., էջ 24:
- 13) ՊՏ թիվ L 280, 29.10.1994թ., էջ 83:
- 14) ՊՏ L 166, 11.6.1998թ., էջ 51: Թիվ 1999/44/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 171, 7.7.1999թ., էջ 12):
- 15) ՊՏ L 210, 7.8.1985թ., էջ 29: Թիվ 1999/34/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 141, 4.6.1999թ., էջ 20):
- 16) ՊՏ թիվ L 171, 7.7.1999թ., էջ 12:
- 17) ՊՏ թիվ L 113, 30.4.1992թ., էջ 13:
- 18) ՊՏ թիվ L 213, 30.7.1998թ., էջ 9:
- (19) ՊՏ թիվ L 281, 23.11.1995թ., էջ 31:
- 20) ՊՏ թիվ L 24, 30.1.1998թ., էջ 1:
- 21) ՊՏ L 204, 21.7.1998թ., էջ 37: Թիվ 98/48/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 217, 5.8.1998թ., էջ 18):

- 22) ՊՏ թիվ L 320, 28.11.1998թ., էջ 54:
- 23) ՊՏ թիվ L 15, 21.1.1998թ., էջ 14:
- 24) ՊՏ թիվ L 13, 19.1.2000թ., էջ 12:
- 25) ՊՏ թիվ C 23, 28.1.1999թ., էջ 1:
- 26) ՊՏ թիվ L 19, 24.1.1989թ., էջ 16:
- 27) ՊՏ L 209, 24.7.1992թ., էջ 25: Վերջին անգամ Հանձնաժողովի թիվ 97/38/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 184, 12.7.1997թ., էջ 31):
- 28) ՊՏ թիվ L 117, 7.5.1997թ., էջ 15:
- 29) ՊՏ թիվ L 145, 13.6.1977թ., էջ 1: Վերջին անգամ թիվ 1999/85/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ, L 277, 28.10.1999թ., էջ 34):

## ՀԱՎԵԼՎԱԾ

### 3-րդ ՀՈԴՎԱԾԻՑ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ

Ինչպես նախատեսված է 3(3), 3(1) (2) հոդվածներով, շեղումները չեն տարածվում՝

- թիվ 87/54/ԵՀՏ (1) եւ թիվ 96/9/ԵՀ (2) հրահանգներում նշված հեղինակային իրավունքի, հարակից իրավունքների, ինչպես նաեւ արդյունաբերական սեփականության իրավունքների վրա,
- կառույցների կողմից թողարկված էլեկտրոնային փող, որոնց մասով անդամ պետությունները կիրառում են թիվ 2000/46/ԵՀ հրահանգի 8(1) հոդվածով նախատեսված շեղումները (3),
- թիվ 85/611/ԵՏՀ (4) հրահանգի հոդված 44(2)-ը,
- թիվ 92/49/ԵՀՏ (5) հրահանգի 30-րդ հոդված եւ IV բաժին, թիվ 92/96/ԵՀՏ հրահանգի IV բաժին (6), թիվ 88/357/ԵՀՏ հրահանգի 7-րդ եւ 8-րդ հոդվածները (7) եւ թիվ 90/619/ԵՀՏ հրահանգի 4-րդ հոդվածը (8),

- կողմերի ազատությունն իրենց պայմանագրի նկատմամբ կիրառվող իրավունքի ընտրության հարցում,
- սպառողական պայմանագրերին վերաբերող պայմանագրային պարտավորությունները,
- անշարժ գույքի նկատմամբ իրավունքներ ստեղծող կամ փոխանցող պայմանագրի ձեւական վավերությունը, եթե նշված պայմանագրերը կարգավորվում են անշարժ գույքի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի ձեւական պահանջներով,
- էլեկտրոնային փոստով անցանկալի առետրային հաղորդակցությունների թույլատրելիությունը:

1) ՊՏ թիվ L 24, 27.1.1987թ., էջ 36:

2) ՊՏ թիվ L 77, 27.3.1996թ., էջ 20:

3) Դեռ չի հրապարակվել պաշտոնական տեղեկագրում:

4) ՊՏ թիվ L 375, 13.12.1985թ., էջ 3: Վերջին անգամ թիվ 95/26/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ, L 168, 18.7.1995թ., էջ 7):

5) ՊՏ թիվ L 228, 11.8.1992թ., էջ 1: Վերջին անգամ թիվ 95/26/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ:

6) ՊՏ թիվ L 360, 9.12.1992թ., էջ 2: Վերջին անգամ թիվ 95/26/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ:

7) ՊՏ թիվ L 172, 4.7.1988թ., էջ 1: Վերջին անգամ թիվ 92/49/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ:

8) ՊՏ թիվ L 330, 29.11.1990թ., էջ 50: Վերջին անգամ թիվ 92/96/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ: